

**7.**

## **ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** **HISTORY** **ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ**

### **ԹՈՒՐՔ-ԹԱԹՈՎԱՐԱԿԱՆ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳՎԱՅՈՒՄ 1918-1920 ԹԹ.**

**Հ. Ա. ԴԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ*

Յայաստանի Յանրապետությունում հասարակական-քաղաքական կյանքը 1918-1920թթ. դրսևորվել է նաև պետականությունը ներսից քանդող ուժերի դեմ պայքարի ձևով:

Պատմությունը վկայում է, որ Յայաստանի Յանրապետության գոյության հետ ի սկզբանե չէին համակերպում նրա անմիջական հարևաններ Վրաստանը, Աղրբեջանը և Թուրքիան: Եթե առաջինը Յայաստանի հետ ուներ հնուց եկած սահմանային-տարածքային կնճռուտ վեճեր և արտաքին քաղաքական կողմնորոշումների խնդիրներ, ապա վերջիններս՝ նաև ազգային ու կրոնական թշնամքը: Յանրապետության առաջին վարչապետ Յ. Քաջազնունու դիպուկ բնորոշմամբ՝ «Յայաստանը մնացել էր մենակ, չորս կողմից շրջապատված թշնամի կամ անբարյացակամ ուժերով, առանց որևէ արտաքին նեցուկի և օգնության»:<sup>1</sup>

Յայաստան պետության արտաքին քարդ ու ծանր վիճակը, անշուշտ, իր փոխկապակցված ազդեցությունն ունեցավ Երկրի ներքին կյանքի վրա՝ այն ավելի խճճելով ու անկայում դարձնելով, պարարտ հող էր ստեղծում հարևան Երկրների, մասնավորապես Թուրքիայի և Աղրբեջանի համար էլ ավելի ապականելու ու անկառավարելի դարձնելու Յայաստանի ներքին կյանքը՝ իրահրելով հայաստանարև մահմեդականությանը հակապետական խռովությունների ու զինված ելույթների: Այդ Երկրները Յայաստանը ներսից քայլած էլու իրենց ծրագրերը, իհարկե, գործնականում կիրառում էին հանրապետության այն շրջաններում, ուր կար ստվար թուրքական բնակչություն:

Յակապետական շարժումների հիմնական օջախներից մեկը հանդիսացավ Նոր Բայազետի գավառը, առաջին հերթին Բասարգեչարի շրջանը՝ ոչ առանց հիմքի: Շրջանը սահմանակից էր Աղրբեջանին և լիցքավորվում էր այնտեղից, մյուս կողմից էլ բնակչության կազմում մեծ էր մահմեդականների տեսակարար

<sup>1</sup> Յայաստանի ազգային արխիվ (այսուհետ ՅԱՍ), ֆ. 200, գ.1, գ. 498, թ. 48:

Կշիռ:

Արևելյան Հայաստանում տեղի ունեցած թուրք-բաթարական խռովություններն ու ապատամբությունները, ինչպես իրենց զանգվածային բնույթով, այնպես էլ դաժան կերպարանք ընդունած պայքարի ձևերով, սկսվեցին 1918թ. սկզբներին՝ դեպի Արևելյան Հայաստան թուրքական արշավանքի և զուգահեռաբար ցեղակիցների կողմից գործնական ու բարոյական համակողմանի օգնություն ցույց տալու հետ կապված և ծավալուն շարունակություն ունեցան Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին:

Հայաստանը ներսից պայքեցնելու և մաս-մաս Ադրբեյջանի կցորդը դարձնելու թուրք-բաթարների անզուսապ հավակնությունները իրենց բարձրակետին հասան Ադրբեյջանը անկախ պետություն դաշնալուց հետո: Նորաթուխ Ադրբեյջանի Հանրապետությունը խրախուսում և սատարում էր ցեղակիցների անջատողական ծգտումներին: Այս օրապակաս հանրապետությունը, որ ի սկզբանե հավակնություն ուներ ընդհանուր առմանք Սևամի ավազանի նկատմամբ, ամեն կերպ՝ խոշոր գումարներով, գենք-զինամթերքով, զինված մարդկանցով, փորձառու սպաներով օգնում էր տեղական թրքությանը և դրդում նրան գենք բարձրացնել օրինական իշխանության դեմ:

Այս համատեքստում փաստենք, որ Հայաստանի և հայության հանդեպ ունեցած ատելության մաղձը թափելու պահը բաց չթողեցին Նոր Բայազետի շրջանի ամբողջ մուսուլման բնակչները, որոնց գյուղերը՝ Բեղլու-Շուսեյին Սարաջլու (այժմ՝ ավերակ), Ռախնան - քենդ (Եֆենտի քենդ), Աղ-կալա, Այրիվանք, Քիզիլ-ջիկ, ընկած էին Ելենովկա-Նոր Բայազետ խճուղու աջ կողմում:

Մինչև բասարգեցարյան հայտնի իրադարձությունները իիշյալ գյուղերի թրքությունը բաց տեքստով չէր խօսում Ադրբեյջանի շահերին իր անվերապահ նվիրվածության կամ իրենց զբաղեցրած տարածքը Բաքվի ենթակայությանը հանձնելու մասին: Պակասում էր միայն առիթը պայթյուն առաջացնելու համար: Առիթը չուշացավ: Իսկ առիթը հանգամանքների բերումով Թիֆլիսից Ղարաբիլսայի և Դիլիջանի վրայով Շուշիի գնդի հայտնվելն էր Նոր Բայազետի գավառում:<sup>2</sup>

Մարտի 4-ին գումար հասնում է Ելենովկա: Մարտի 9-ին գնդի առաջապահ ջոկատներն ուղևորվում են դեպի Նոր Բայազետ: Երթուղին բավականին վտանգավոր էր: Ելենովկա-Նոր Բայազետ խճուղու վրա գտնվող 8 գյուղերից 6-ը թուրքաբնակ էին, մեկը՝ Նոր Նիկոլաևկան կամ Զեյնալը՝ ռուսաբնակ, իսկ վերջինը՝ Օրդարլուն, հայաբնակ:

Գանձակի թուրքերը նախապես լավ զինել էին խճուղու թրքությանը և իրահանգել՝ ամեն գնով ձախողել գնդի զորաշարժը դեպի Ղարաբաղ:

Մարտի 13-ին Ելենովկա-Նոր Բայազետ ճանապարհի միջնամասում՝ Հաջիմուխանում թուրքերը անսպասելի զինված հարձակում գործեցին զորամասից հետ մնացած մի քանի ձիասայլերի վրա: Զինվորները հարկադրված դիմեցին գենքի: Երկու կողմից էլ եղան սպանվածներ ու վիրավորներ: Մարտում 12 զինվոր սպանվեց, իսկ 30-ը գերի ընկավ, որոնց թուրքերը զազանաբար սպանեցին:

<sup>2</sup> Գնդի ստեղծման և նրա Սևամի ավազանում հայտնվելու պատմության մասին մանրամասն տե՛ս Յ. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1966 թ., էջ 108:

Թուրքերի կորուստները շատ ավելի մեծ էին: Զորամասը հարկադրված նահանջում է Ելենովկա:<sup>3</sup>

Գնդապետ Միքայել Սելիք-Շահնազարյանը կոչով դիմեց թուրքերին՝ թույլ տալ որպեսզի գումղը անարգել անցնի Նոր Բայազետ: Գանձակի մուսավաթականների թելադրանքով, նրանք կտրականապես մերժեցին: Երկու կողմերի համար զինված ընդհարումը դարձավ անխուսափելի: Երևանից Ելենովկա տեղափոխվեց 2-րդ պարտիզանական գումղը՝ Ա. Թարվերոյանի հրամանատարությամբ: Գնդին հրամայված էր՝ պատժել հաջիմուխանցիներին և ապահովել դեպի Նոր Բայազետ խճուղու ազատ ու անվտանգ երթևելությունը: Նախքան պատժի զորամասի գործի անցնելը, Նոր Բայազետի մտավորականությունը փորձեց խաղաղ կերպով վերջ տալ այդ ցավալի դեպքերին: Մարտի 18-ին Նոր Բայազետի քաղաքագլուխ Վահան Աֆրիկյանը, կոմիսար Ս. Թազայանը և շրջանի գործակալ Եզնիկ Վարդապետը Նոր Բայազետից այցելեցին լճափնյա խճուղու վրա ընկած Այրիվանը, Աղջիբեր, Յաջմուխան, Աֆանդի և Բեղլու-Յուսեյին Սարաջու թուրքաբնակ գյուղերը՝ հանողելու բնակչությանը, որ չխանգարեն գնդի առաջխաղացմանը: Յիշյալ գյուղերի բնակիչները, բացառությամբ Յաջիմուխանի, դատապարտեցին այդ արարքը և պահանջեցին խստորեն պատժել մեղավորներին: Գնդի ճանապարհ դեպի Նոր Բայազետ առաջինը անցնելու էր Բեղլու-Յուսեյին գյուղով: Մարտի 19-ին Միքայել Սելիք-Շահնազարյանը իր սպաներից մեկին, Օրդաքլու գյուղից երկու հայերի ուղեկցությամբ, ճանապարհեց Բեղլու-Յուսեյին՝ բնակչությանը բացատրելու, որ նրանց դեմ գումղը ոչինչ չունի: Յայերի մեծահոգի վերաբերմունքին թուրքերը գոռողաբար պատասխանեցին, որ իրենք ոչ միայն Շուշիի գնդին, այլև ոչ մի թօչունի անգամ թույլ չեն տա անցնելու իրենց գյուղով: Երբ գումղը բռնեց Նոր Բայազետ տանող ճանապարհը, Բեղլու-Յուսեյին թուրքերը կրակոցներով դիմավորեցին նրան: Զինվորներից մի քանիսը սպանվեցին ու վիրավորվեցին: Կորվը տևեց երեք ժամ: Թուրքերը փախուստի դիմեցին: Գերի ընկած կամանց ու երեխաներին՝ թվով 65 հոգի, տեղափոխվեցին Օրդաքլու գյուղը, հաջորդ օրը հարևան թուրքերին հանձնելու համար:<sup>4</sup> Մարտի 20-ի երեկոյան գնդի զինվորները մտան Նոր Սիկոլակա և այստեղ գիշերեցին: Մարտի 21-ի վաղ առավոտյան պատժող գորամասի երկրորդ վաշտը և Շուշիի գնդի մարտիկները համառ մարտերից հետո գրավվեցին Ռախմանքենդ-Էֆենդիքենդ գյուղը: Յաղթահարելով ճամփին ընկած մյուս թուրքաբնակ գյուղերի դիմադրությունը ևս, մարտի 26-ին գումղը և նրան օգնության եկած երկրորդ պարտիզանական գնդի մարտիկները մտան Նոր Բայազետ:<sup>5</sup>

Կարճատև հանգստից և ուժերը կարգի բերելուց հետո ապրիլի 5-ին Նոր Բայազետից գումղը ճանապարհ ընկավ դեպի Ներքին Ղարանլուղ: Այստեղ հասավ նաև Գանձակի 500 հոգանոց գումարտակը և մտավ Շուշիի գնդի հրամանատարության տակ:

Ներքին Ղարանլուղում գնդի սպայական կազմի մեծ մասը, գնդապետի գլխավորությամբ, հրաժարվեցին Բասարգեչար-Զորդ գծով Ղարաբաղ մտնելու

<sup>3</sup> Տե՛ս Յ. Յարությունյան, Աշվ. աշխ., էջ 108:

<sup>4</sup> Տե՛ս «Յայրենիք», Բուքրոն, դեկտեմբեր, 1933, էջ 91-92:

<sup>5</sup> Տե՛ս Յ. Յարությունյան, Աշվ. աշխ., էջ 109:

որոշումից: Բանն այն էր, որ Բասարգեչարը շրջապատված էր տեղական թուրքական ուժերի կողմից: Գնդի առաջխաղացումն այդ ուղղությամբ անխուսափելի հորեն առաջ կրերեր ընդհարում թուրքերի հետ: Մինչդեռ Երևանից հրահանգ էր ստացվել ճանապարհն անցնել միանգամայն խաղաղ, առանց մի գնդակ արձակելու:<sup>6</sup> Գունդը կանգնեց դժվարին դրության առաջ՝ նրա հրամանատարության դանդաղարժության և անհեռատեսության պատճառով: Յովակ Ստեփանյանը խոստովանել է, որ գունդը նման դրության մեջ չէր գտնվի, եթե «Գնդապետը հեռատես լիներ և Ղարաբիլիսայից գույքը տեղափոխեր ուսւների միջոցով: Այն ժամանակ այդ գյուղն էլ չէր պաշարվի, մենք էլ շատ շուտ կհասնեինք Ղարաբաղ և փոխանակ Օրդաքլու-Բայազետ տանող խճուղու թքական գյուղերում սպառելու մեր եռանդն ու ռազմամթերքը, կմաքրեինք Բայազետ-Ջիվանշիր գիծը, որը ավելի կարևոր էր»:<sup>7</sup>

Լեռնային Ղարաբաղ տանող միակ ճանապարհը մնում էր Սելիմ-Ղարալագյազ-Սիսիան-Գորիս խճուղին: Այս ճանապարհով էլ մայիսի առաջին կեսին սկսվեց գնդի դժվարին ու երկարատև երթը դեպի Արցախ: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ մայիսի 26-ին գունդը հասավ Վայոց Ձոր, իսկ հուլիսի 20-ին՝ Գորիս:

Վերադառնանք այն օրերին Յայաստանի մեջ լայն տարածում գտած, այսպես կոչված, բասարգեչարյան իրադարձություններին: Այստեղի թուրքերը, չանսալով Յայաստանի իշխանությունների հորդորներին, իրենց աշխարհիկ և հոգևոր առաջնորդների դրդնամբ անթաքույց շարունակում էին փայփայել Աղրբեջանին միանալու հույսը և ծավալում էին առավել վտանգավոր հակապետական գործողություններ: «Թաքարները կենդրոն ունենալով Զոդը, հոն հաստատած էին Աղրբեջանի իշխանությունը և ամուր փակած էին Զիւանշիրի ճանապարհները. Բայազետի շրջանի Բասարգեչարի շրջանում... թաթար գյուղերը, որ անմիջապես կապուած էին Զիւանշիրի հետ և սահմանակից Աղրբեջանին,- գրում է Ռ. Տեր-Մինասյանը,- իրենց հայտարարում էին ոչ թե անկախ, այլ մասը Աղրբեջանի. Ինն նստած էին Աղրբեջանի գործակալներ և պաշտօնեաներ, իսկ մէր պաշտօնէութիւնը մուտք չուներ այդ երկրում»:<sup>8</sup>

Բասարգեչարի շրջանի մուսուլման բնակչության ներսում իրենց ավարտին էին մոտենում «գաղափարական» խճորումները, և զգացվում էր խոսքից գործին անցնելու պահանջը: 1918թ. աշնանը Զոդ գյուղի բնակիչ, շրջանի նախկին գավառական կոմիսար Աբբաս Ալին Բասարգեչարի շրջանը Աղրբեջանին միացնելու նպատակով մի քանի ազդեցիկ թուրքերի ուղարկեց Գանձակ, որպեսզի հպատակություն հայտնեն աղրբեջանական իշխանություններին՝ ակնկալելով նրանց անմիջական ռազմական օգնությունը:<sup>9</sup>

Աստիճանաբար շրջանը վերածվում էր Յայաստանի մուսուլման բնակչության հակապետական շարժման և անջատողական գաղափարների տարածման

<sup>6</sup> Տե՛ս «Յայունիք», Բուքոն, հունվար, 1933, էջ 103-104:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> **Ոուրէն**, Յայ Յեղափոխակնի մը յիշատակները, հատ. 7, էջ 210:

<sup>9</sup> Տե՛ս 4. **Վիրաքյան**, Յայաստանի Յանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920թթ., էջ 227:

կենտրոնի: Յանրապետության իշխանությունների շրջանում հրամայական պահանջ զգացվեց դիմելու կտրուկ և վճռական գործողությունների: 1918թ. աշնանը Յայաստանի կառավարությունը պատժի զորամաս ուղարկեց Բասարգեչարի շրջան: Նոր Բայազետի գավառական կոմիսար Շահինյանի և պատժի զորամասի հրամանատար Տիգրան Բաղդասարյանի՝ մահմեդականների զինված ընդունումները առանց ուժի կիրառման խաղաղեցնելու ջանքերը ապարդյուն անցան: Թուրքերը պարտադրված եղան զինաթափել և հպատակություն հայտնել հանրապետության իշխանություններին այն բանից հետո, երբ պատժի զորամասը ռմբակոծեց Մեծ Մազրա գյուղը:<sup>10</sup>

Բասարգեչարի խոռվությունը մեծ տպավորություն բողեց Յայաստանի մահմեդական բնակչության վրա և աշխուժություն առաջացրեց նրանց շարքերում: Նրանք սկսեցին բացահայտ կերպով միջամտել հանրապետության ներքին գործերին: Դիմումներ են ուղարկում Աղբեջանի կառավարությանը և այլ հասցեներով՝ նկարագրելով իրենց «ծանր» դրության նասին և կոչ անում նրանց գրավել Յայաստանը և ազատագրել իսլամի վրա բռնացող իշխանություններից: 1919թ. հունվարի 2-ին Երևանում կայացավ հայաստանարնակ մահմեդականների հասարակական գործիչների խորհրդակցություն: Այստեղ քննարկվում են մահմեդական բնակչության դժգոհության պատճառները, և ողջ պատասխանատվությունը դրվում է Յայաստանի կառավարության վրա: Սասնակիցներից Բեգ Բայրամբեգովը խորհրդակցությանն է ներկայացնում տեղեկություններ Երևանի նահանգի մահմեդականների, այսպես ասած, ողբերգական դրության մասին: Խորհրդակցությունում տեղի ունեցած քննարկումների և բանավեճերի արդյունքում զննվում դաշնակից գործերի հրամանատար գեն. Թոմսոնին (ոչ ավել, ոչ պակաս Հ.Հ.)՝ գրավել Երևանի նահանգը, իսկ եթե որևէ պատճառով հնարավոր չլինի, ստիպել Արարատյան հանրապետության կառավարությանը՝ ձեռք առնել իրական միջոցներ հայկական հրոսակախմբերի գազանությունների դեմ: Խորհրդակցության հանձնարարությամբ S. Մակինսկին, Պալարեգ Բայրամբեգովը, Ռաշիդ Իսմայիլովը և Ազիզ Սուլթանովը մեկնում են Բաքու և հանդիպում գեն. Թոմսոնի հետ:<sup>11</sup>

Իր տեղում կտեսնենք, որ անգլիացիներից, ի դեմս գեն. Թոմսոնի և գնդապետ Թենապերլիի, ակնկալվող միջամտությունը չուշացավ:

Այս ամենով հանդերձ, հայ-թաթարական հարաբերություններում ծայր առաջ առաջ լարվածությունը ինչ-որ չափով պայմանավորված էր նաև նրանով, որ սովալլուկ ու անօրեան հայ փախստականները հաճախակի զինված հարձակումներ էին կատարում գավառի, առաջին հերթին Բասարգեչարի շրջանի մուսուլմանական գյուղերի և բնակավայրերի վրա: Յայ փախստականների զանգվածային հարձակումները սկսեցին ավելի սիստեմատիկ բնույթ ստանալ 1919թ. սկզբներին, երբ հաճախակի դարձան զինված թուրք ու բուրդ պազակաբար խմբերի ոտնձգությունները հայության անձի ու գույքի նկատմամբ: Եվ այսպես, 1919թ. հունվարի վերջին Յայաստանի Յանրապետության տարածքի վարչակազմի ղեկավարին

<sup>10</sup> Տե՛ս Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 228:

<sup>11</sup> Տե՛ս «Մշակ», 16 հունվարի 1919, թիվ 12:

ուղղված հեռագրում Նոր Բայազետի գավառական կոմիսարը տեղեկացնում է, որ Բասարգեչարի շրջանում փախստական հայերի սոված ամբոխը զինված հարձակում է կատարել թաթարական բնակավայրերի վրա: Որպես օրինակ են բերվում Վերին Զաղալու, Ղըզըլ Վանք և Սուլբրոտան գյուղերը:<sup>12</sup>

Նույն թվականի փետրվարի 2-ին Շահինյանի կողմից դարձալ տարածքային վարչակազմի ղեկավարին հասցեագրված պաշտոնագրից տեղեկանում ենք, որ փախստականները Մուշեղի, Վահանի, Իշխանի, Նիկոլի գլխավորությամբ աջակցել են տեղի հայերին դուրս քշել մուսուլմաններին Ղըզըլ Վանք, Վերին Զաղալու և Սուլբրոտան բնակավայրերից: Նշվում է, որ թաթարները փախել են հարևան գյուղերը:<sup>13</sup>

Որ Յայաստանի կառավարությունը ազգային քաղաքականության մեջ խորականություն չէր դնում, լրացուցիչ անգամ փաստում է նույն աղբյուրը. «...տեղ հասած զորանասերին հաջողվել է զինաթափել փախստականներին, իսկ թաթարներին տեղափորել իրենց գյուղերում և վերադարձնել թալանված ունեցվածքը».<sup>14</sup>

Միանգամից ասեմ, որ ամեննին էլ չեմ կարծում, թե հայերի ու թաթարների միջև ծայր առած լարվածության պայմաններում ամեն ինչ այդպես հեշտությամբ էլ կավարտվեր, եթե չինեին փախստականների զինված հարձակումները թաթարական մի շարք բնակավայրերի վրա: Այժմ արդեն մուսուլման բնակչության հակապետական գործունեությունը տեղը գիշել էր ֆիզիկական գյուղունը և ունեցվածքը պաշտպանելու համար պայքարին:

Բասարգեչարի շրջանում առաջացած խնդրի վերաբերյալ կառավարության նախագահ Ալեքսանդր Խատիսյանին 1919թ. փետրվարի 18-ին ուղղված պաշտոնագրում արտգործնախարար Սիրական Տիգրանյանը պարզաբանումներ է տալիս, որ, բացի մասնավոր անհատներից, ովքեր կատարել են այդ հանցագործությունը, կրելու են օրինական պատիժը: Նախարարը գտնում է, որ, դատելով քննության նյութերից, տեղական ադմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութություն և ապիկարություն: Տ. Սիրականյանը համոզումունք է հայտնում, որ «այդ վարիչները խիստ դատի կանչվեն, պատժի ենթարկվեն և թերևս հեռացվեն պետական պաշտոնեությունից, իսկ դիվիզիոնի հրամանատար ռուտմիստր Սիլիկյանը, որի միջամտությամբ է վերականգնվել կարգն ու խաղաղությունը, արժանացվի կառավարության շնորհակալության»:<sup>15</sup>

Շուտով պարզվեց, որ դա մի աննշան անդորր էր փոթորկից առաջ: Բասարգեչարի շրջանում դրությունը գնալով բարդանում էր: Ընդմիջելով խռովությունները և ընդգումները, թուրքերը դրանով թուլացրին հայերի գգոնությունը և փետրվարի 27-ին կազմակերպեցին Զողի ոճրագործությունը: Պատմությունն այսպիսին է. հավատալով և վստահելով թուրքերին, որ նրանք արդեն հանդարտվել ու խաղաղվել են, փետրվարի 24-ին ռոտմիստր Սիլիկյանը դիվիզիոնի

<sup>12</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 263, թ. 115:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 6:

<sup>14</sup> Նույն տեղում, թ. 115:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 263, թ. 110:

հետ միասին գնում է Մեծ Մազրա գյուղը: Փետրվարի 25-ի առավոտյան 1-ին Էսկադրոնով և 2-րդ Էսկադրոնի կեսով վերադառնում է Փոքր Մազրա: Նույն օրը Սիլիկյանը, իր համահարզ Շիմկիչի հետ միասին, կիսաէսկադրոնով մեկնում է Զոդ, ուր իջևանում է Ագիլյար Սամանդ Աղա Քեսմանսկի անունով թաթարի մոտ, իսկ զինվորները՝ թաթարների տներում: Գյուղի երևելիները որոշում են գիշերային հանկարծակի հարձակմամբ ոչնչացնել զորացոկատը, որը և իրագործվեց. դիվիզիոնի 4 սպաներ, այդ թվում ռոտմիստր Սիլիկյանը և 80 զինվորներ սպանվեցին:<sup>16</sup>

Այս փաստը ինքնին վկայում է, որ Բասարգեչարի շրջանի մահմեդական բնակչությունը իրականում լուրջ նպատակ էր որել զինված գործողություններով օգնել Աղրբեջանին՝ հեշտությամբ լուծել շրջանը Հայաստանից անջատելու հարցը, իսկ մյուս կողմից՝ իր օրինակով ոտքի հանել գավառի մնացած մուսուլման բնակչությանը:

Զոդի իրադարձություններն այդ օրերի հայկական քաղաքական օրակարգի առանցքային հարցն էր, որի անտեսումը և ժամանակին լուծում չտալը կարող էր ել ավելի սրել ու բարդացնել հանրապետության ներքաղաքական իրավիճակը, արգելակել հանրային կյանքին և վտանգել երկրի տարածքային ամբողջականությանը:

Բասարգեչարի շրջանում տեղի ունեցող հակապետական իրադարձությունների կարգավորման վերաբերյալ պաշտոնական Երևանի տեսակետը հետևյալն էր. առաջացած խնդիրները թուրք-թաթարական հասարակության հետ լուծել խաղաղ ճանապարհով: Ցավոք, հանրապետության իշխանությունների սպասումներն ամբողջությամբ չարդարացան՝ առաջին հերթին Աղրբեջանի կողմից Հայաստան պետության ներքին գործերին խառնվելու պատճառով:

Զոդի իրադարձություններով Աղրբեջանի կառավարությունը հնարավորություն ստացավ էլ ավելի բացահայտ կերպով միջամտել Հայաստանի ներքին կյանքին և բաց տերաստով խոսել՝ կանխորոշելով Աղրբեջանի կազմում Բասարգեչարի շրջանը:

Ավելորդ չել, որ հարևան հանրապետության նվաճողական ծրագրերի մեջ էր մտնում ոչ միայն Բասարգեչարի շրջանը, այլ նաև ամբողջ Սևանա լճի ավագանը:

Բասարգեչարի շրջանի խառնակ օրերին, ինչպես վկայում են վավերագիր աղբյուրները, հակահայկական ջղաձգությունը բարձրակետին էր հասել նաև Հայաստանին սահմանակից աղրբեջանական շրջաններում, որպիսիք էին Բաշքենդի և Գետաբեկի շրջանները: Այս շրջանների բնակչությունը Զոդի իրենց հայրենակիցներին օգնում էին ինչով կարող էին՝ զինյալներով, հրանոթներով, գնդացիրներով, հացահատիկով և առաջին ամիրաժեշտության այլ միջոցներով:<sup>17</sup>

Ինչ խոսք, որ այս ամենը թևավորում ու նորանոր հանցագործությունների էր մղում Բասարգեչարի շրջանի մուսուլմանական խառնամբոխին: Առաջ անցնելով նշենք, որ վերը ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ որոշակի կապ նաև այս ամենի և Զոդի բնակչության կողմից Արտակարգ քննչական հանձ-

<sup>16</sup> Տե՛ս Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 232-234:

<sup>17</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 64, թթ. 2-4:

նաժողովի հետ բանակցելուց հրաժարվելու միջև:

Այսպիսով՝ թուր իհմքերը կան փաստելու, որ մեծաթիվ կյանքեր խլող, շղթայական ռեակցիայով նորանոր ծավալներ ընդգրկող արյունալի իրադարձությունների առաջին պատասխանատուն Աղրբեջանն էր:

Առաջմն մի կողմ թողնենք Աղրբեջանի ազդեցությունը հայաստանյան իրավիճակի սրման վրա, որին դեռ առիթ կունենանք անդրադառնալու, վերադառնանք Զոր գյուղի շուրջը ծավալված իրադարձությունների լուսաբանմանը:

1919թ. մարտի 1-ին հանրապետության կառավարությունը հերթական նիստում, լսելով ՆԳ նախարարի հաղորդումը Զոր գյուղում տեղի ունեցած զինված բախումների մասին, որոշում է ստեղծել Արտակարգ քննչական հանձնաժողովը՝ դատախազի օգնական Փարսադանովի<sup>18</sup> նախագահությամբ և գործուղել դեպքի վայր՝ տեղի ունեցած իրադարձությունների հետ առնչվող թուր հանգամանքները հետաքննելու, բացահայտելու մեղավորներին, որոնք առնչություն են ունեցել այդ հանցագործության հետ։<sup>19</sup>

Այստեղից դժվար չէ հետևություն անել, որ Յայաստանի իշխանությունները խնդիր ունեին խուսափել թուրքերի հետ զինված բախումներից և ցանկանում էին միջադեպը հարթել խաղաղությամբ:

Դանձնաժողովը մարտի սկզբին եկավ Նոր Բայազետ: Մարտի 4-ին մարտավարական որոշ նկատառումներով, ոչ լրիվ կազմով, այլ միայն գավառի կոմիսարությունի հետ մեկնում են Բասարգեչարի շրջան՝ կարգավորելու հակամարտությունը խաղաղ ճանապարհով: Սակայն խռովարանների պարագլուխները ցուցադրեցին ծայրահեղ դիրքորոշում և հայտարարեցին, որ խաղաղության երաշխիքը հնարավոր է միայն «մեր հողերի» լիարժեք անկախացումից հետո և, որ իրենք ամեն ինչ կամեն հայկական կողմին պարտադրելու Բասարգեչարի շրջանից հրաժարվելու համար: Թուրքերը հայ բանագնացներին դիմավորում են կրակոցներով: Յայաստանի իշխանությունները համոզվեցին, որ եթե այսպես շարունակվի՝ իրենց որդեգրած դիրքորոշումը հաջողությամբ չի պահպի, քանի որ մահմեդական բնակչությունը մտադիր էր շարունակել իր անջատողական պայքարը:

Ի պատասխան տեղի թրքության ծավալած այս գործողություններին՝ շտաբ-ռոտմիստր Կուլդրյավցեկ Նոր Բայազետից մարտի 5-ին շտապ հեռագրում է Երևան՝ գեներալներ Սիլիկյանին, Փիրումյանին և տարածի կոմիսարին: Նա տեղեկացնում է, որ թաթարները խաղաղվելու ցանկություն չունեն: Նկատի ունենալով այս և շրջանում, մասնավորաբար Զոր գյուղում, աղրբեջանցի մի քանի հազարի հասնող զինյալների առկայությունը, Կուլդրյավցեկ կարծիք է հայտնում, որ թուրքերի դիմադրությունը ճնշելու, նրանց օրինականության դաշտ վերադարձնելու և հանրապետության իշխանությունն այդ շրջանի վրա վերականգնելու համար անհրաժեշտ է այնտեղ ուղարկել նոր գորամաս:<sup>20</sup> Այս հարցում Կուլդրյավցեկի հետ համակարծիքի էր գավառական կոմիսար Շահինյանը: Նա Սիլիկյանին ուղղված մարտի 5-ի հեռագրում, շտաբ-ռոտմիստրի հետ համախոր-

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 263, թ. 72:

<sup>19</sup> Սանրամասն տե՛ս **Վիրաբյան**, նշվ. աշխ., էջ 233-234:

<sup>20</sup> Տե՛ս ՅԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 64, թ. 3, **Վ. Վիրաբյան**, նշվ. աշխ., էջ 235:

հուրդ, անհրաժեշտ է համարում այդ շրջանն ուղարկել պատժիչ ջոկատ՝ թնդանոթներով:<sup>21</sup>

Յարկ է նշել, որ այս կապակցությամբ զինվորական նախարար Յախվերոյանը շտափում է իր մտահոգությունները կիսել կառավարության ղեկավարի հետ: Նա մարտի 7-ին գավառական կոմիսարի նշված գրությունն ուղարկել է մինիստր-նախագահին և հարց բարձրացրել Նոր Բայազետ ուղարկել մեկ գումարտակ և երկու թնդանոթ:<sup>22</sup>

Վերը նշված հեռագիր-գրություններից դժվար չէ նկատել, որ հայկական կողմը ստիպված էր լինելու Բասարգեչարի շրջանի մահմեղական քնակչության անջատողական քայլերը ճնշել գենքի միջոցով: Նույմիսկ Բրիտանիայի զինվորական ներկայացուցիչ գնդապետ Կ. Թեմպերլիյը<sup>23</sup> գտնում էր, որ անհրաժեշտ է զինված ուժ օգտագործել, եթե թաթարները չթույլատրեն քննչական հանձնաժողովը մեկնի դեպքի վայրը:<sup>24</sup>

Մարտի 8-ին քննչական հանձնաժողովը եկավ Բասարգեչար և անցավ պարտականությունների կատարմանը: Մարտի 11-ին Մեծ Մազրա գյուղում քննչական հանձնաժողովը հանդիպեց Զոդ գյուղի մուսուլմանների ներկայացուցիչների հետ: Խնդրի կարգավորման շուրջ հանձնաժողովի պայմանները լուրջ հակազդեցության հանդիպեցին վերջիններիս կողմից: Թուրք բանագնացները օգտագործելով իրենց խարդախ դիվանագիտությունը՝ միտումնավոր կերպով խեղաթյուրում են դեպքերի և իրողությունների պատճառահետևանքային կապը, ապա իրենց տեսակետները հիմնավորում ոչ այնքան փաստերով, որքան փաստերի ուղղողությամբ՝ մանիպուլացիայով: Քննարկումները որոշակի հացրեցին մահմեղականների դիրքորոշումը՝ ամեն գնով խուսափել խնդրի խաղաղ կարգավորումից՝ Բասարգեչարի շրջանը վաղ թե ուշ Աղրբեջանին հանձնելու մտայնությամբ: Ըստ նախաքննության արդյունքում ձեռք բերված տվյալների՝ հակառակորդի կողմից հանցավոր գործողությունները վաղօրոք նախապատրաստվել էին տեղի անջատողական ուժերի կողմից և ուղղորդվել Բաքվից:

Բանակցությունները մտնում են փակուղի: Յակառակորդը սկսում է Զոդի և մյուս քննչակավայրերի շուրջը կենտրոնացնել մեծ թվով զինյալներ և գենք ու զինամթերք: Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ բացահայտ մարտահրավեր օրինական իշխանություններին: Բասարգեչարի շրջանում իրավիճակն այն աստիճան է լարվում և դառնում անկառավարելի, որ 1919թ. մայիսի 17-ին նախարարների խորհրդը, վերստին անդրադառնալով Զոդի խնդրին, որոշում է քննչական հանձնաժողովը թողնել տեղում՝ նպաստավոր պայմաններ ստեղծվելու դեպքում բանակցությունները վերսկսելու համար: Մեկ այլ որոշմամբ զինվորական նախա-

<sup>21</sup> Տե՛ս նոյն տեղում, գ. 27, թ. 85, Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 235:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 64, թ. 3:

<sup>23</sup> Կ. Թեմպերլիյը բրիտանական զինվորական ներկայացուցությունում հայտնի դեմք էր: 1919թ. հունվար-հունիս անիսներին Կարսի նահանգը Յայաստանի Յանրապետությանը հանձնելու գործում նա, իր հայրենակից գեներալ Զ. Ուոքերի հետ, գլխավոր գործող անձերից էր: Ավելին՝ 1919թ հունվարի 5-ին Թեմպերլիյը նշանակվեց Կարսի նահանգի զինվորական կառավարիչ: Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 198, գ. 1, գ. 15, թ. 71, ֆ. 277, գ. 1, գ. 5, թ. 26:

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 27, թ. 85:

րարին հանձնարարվում է կարգադրություն անել գեներալ Փիրումյանին (սպանված ռոտմիստր Սիլիկյանի փոխարեն նշանակվել էր դիվիզիոնի հրամանատար)` հարկ եղած դեպքում դիվիզիան շարժել դեպի խռովության վայրը.<sup>25</sup>

Անհանգստացած Զոդի խնդրի կարգավորման ձգձգումից և դրա շուրջ ծավալվող Վտանգավոր օարգացումներից՝ մարտի 22-ին Հայաստանի արտգործնախարարը հեռագրով դիմում է Ադրբեջանի իր պաշտոնակցին (պատճենը՝ Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին) և տեղեկացնում (ինչպես որ նախապես տեղեկացրել էր խռովության վայրը քննչական հանձնաժողով ուղարկելու մասին),<sup>26</sup> ամենասուր վեճի առարկա դարձած Զոդի խնդրի մամրամասներին, Ադրբեջանի տարածքից Հայաստան ներքափանցած գինյալ խմբերի ապատամբական ելույթների մասին և պահանջում պաշտոնական Բաքվից կտրուկ քայլերի դիմել այդ խռովությունները կանխարգելելու համար.<sup>27</sup>

Ադրբեջանի պատասխան քայլը եղավ այդ երկրի արտգործնախարարի 1919թ. ապրիլի 5-ին Բաքվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիրան Բեկզադյանին ուղղված գրությունը: Նա իր կառավարության անունից տեղեկացնում է, որ այդ Զոդ գյուղը Ադրբեջանի սահմաններում է գտնվում, ուստի անթույլատրելի է այնտեղ հայկական զորամասեր մտցնելը:<sup>28</sup>

Հայաստանի արտաքին գործերի նախարարը Ադրբեջանի իր պաշտոնակցից այս գրությունը ստացավ երեք օր ուշացումով՝ ապրիլի 8-ին:<sup>29</sup>

Մարդկային զոհերով ուղեկցվող միջադեպերի նույնականությունը, հաճախականության կտրուկ մեծացումը վաղուց անցել էր «մտահոգություն առաջացնելու» սահմանը: Ադրբեջանը խրախուսում էր դրանց շարունակումը՝ անթաքույց հավակնելով Բասարգեչարի շրջանին:

Նկատի ունենալով, որ ապատամբ թաթարների դիրքորոշումը և գործնական քայլերը սկզբունքորեն միտված են Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերածնանը, ուստի չեր բացառվում, որ այս ամենը հանգեցներ հայկական կողմից ուժի կիրառմանը: Հատկանշական է, որ բրիտանական ներկայացուցչությունը, եթե սկզբնական շրջանում ուշադրություն չէր դարձնում նման սպառնալիքներին, այս անգամ անտարեր չմնաց և իր ռազմական ներկայացուցչին, ի դեմս գնդապետ Թենավերլիյի, գործուղեց անհնազանդ Բասարգեչարի շրջան՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և կարգը վերականգնելու, մյուս կողմից է՝ ապահովելու քննչական հանձնաժողորովի մուտքը Զոդ՝ հետաքննություն անցկացնելու: Այդ մասին իմանում ենք հանրապետության արդարադատության նախարար Հարությունովի՝ քննչական հանձնաժողովի նախագահ Փարսադանովին ուղղված մարտի 10-ի նամակից: «Վաղը, - գրում է նա, - գեներալ Թոմսոնի հանձնարարությամբ Նոր Բայազետ է մեկնելու անգլի-

<sup>25</sup> Տե՛ս Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 238:

<sup>26</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 263, թ. 62:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, գ. 1, գ. 486, մաս առաջին, թ. 69, ֆ. 199, գ. 1, գ. 96, թ. 45:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 263, թ. 81:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղու, թ. 64:

ացի գնդապետ Թեմպերլին՝ զոդյան իրադարձությունները կարգավորելու համար»:<sup>30</sup> Մարտի 12-ին գնդապետը այցելում է Բասարգեչար: Մի քանի օր անց՝ մարտի 17-ին, այստեղ է գալիս նաև բրիտանական զինվորականության ներկայացուցիչը: Չօգնեց և բրիտանական զինվորական ներկայացուցիչ միջնորդությունը՝ քննչական հանձնաժողովին Զոդ մտնելու համար: ճարահատյալ Զոդ է ուղևորվում Թեմպերլին: Ապրիլի 9-ին Բասարգեչարից գնդապետ Շախանովը հեռագրով գեն: Փիրումյանին հայտնում է, որ՝ «այսօր գնդապետ Թեմպերլին մեկնել է Զոդ»:<sup>31</sup> Նա հանդիպումներ է ունենում բնակչության հետ: Զոդի խնդրի համար լուծումներ փնտրող անգլիացի գնդապետի տեսակետն այն էր, որ ստեղծված կացության պայմաններում առավելագույն գիշումը, որին կարող էր համաձայնվել տեղի թրքությունը, այն է, որ ապրիլի 11-ից հայկական զորքերը պետք է զբաղեցնեն թաթարական գյուղերը: Ահա սա է եղել գնդապետի միակ պայմանը, որի դեպքում նա համաձայն կլիներ շարունակել խոսակցությունը վիճահարուց հարցերի շուրջ: Թուրքերը համաձայնվեցին՝ պայմանով, եթե զորքերի տեղակայմանը մասնակից դառնա նաև անգլիայի ներկայացուցիչը, հակառակ դեպքում իրենք չեն նահանջի:<sup>32</sup> Նման մոտեցումը հենվում է այն գիտակցության վրա, որ, մեծ հաշվով, այդ պայքարի հիմքում, իսկապես, ընկած էր ոչ թե սոցիալական, այլ քաղաքական դրդապատճառը, որպիսի էր՝ Յայաստանը ներսից պայքեցնել և այն մաս առ մաս հանձնել Աղրբեջանի ենթակայությանը:

Կ. Թեմպերլին բրիտանական զինվորականության ներկայացուցիչ հետ մի քանի օր Զոդում մնալուց հետո վերադառնում է Բասարգեչար: Նրա այստեղ վերադառնալուց որոշ ժամանակ անց՝ ապրիլի 14-ին, Զոդում հակապետական նոր դեպքեր են գրանցվում:

Որքան կարելի է դատել 1919թ. ապրիլի 14-ին Նախարարների խորհրդի նիստում զինվորական նախարարի գեկուցումից, կառավարությունը թեև ուշացումով, վճռական գործողությունների է անցնում խորվությունը ճնշելու համար. հանձնարարում է գեկուցողին հրահանգել գեն. Փիրումյանին անհրաժեշտության դեպքում հարցը համաձայնեցնել Կ. Թեմպերլեյի հետ և դիմել զինված ուժի:<sup>33</sup>

Յայաստանի իշխանություններին չհաջողվեց, իհարկե՝ մահմեդականների մեղքով, խուսափել ուժ գործադրելուց: Այլ խոսքով՝ առաջացավ զորքին դիմելու անհրաժեշտություն: Ապրիլի 14-ին հայկական զորքերի նոր Բայազետի ջոկատը երկու ուղղություններով սկսում է հարձակում թաթարական գյուղերի վրա: Յատկանշական է, որ տեղեկացված լինելով այդ մասին, Վահօրոք բնակչությունը հեռացել էր սահմանակից աղրբեջանական շրջանները կամ բարձրացել էր լեռները: Ահա թե ինչու հայկական զորամասերը առանց մեծ դժվարության մեկը մյուսի հետևից գրավեցին Մեծ Մազրա, Յուսեյն Աղալու, Գալբաշին, Տաշքենդ, Կոշա Բուլաղ, Սիրի Աղունի գյուղերը: Ապրիլի 17-ին հայկական զորամասերը զինա-

<sup>30</sup> Նույն տեղում, թ. 72:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 76:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, գ. 1, գ. 96, թ. 65:

կալում են խռովության որջը հանդիսացող Զոդը, որտեղից բնակչությունը փախել էր: Այնուհետև հայկական գինուժը մտնում է Սարի-Յաղուք, Ղարա-Գոպլի, Աղքիլիսա և Զարգիրիլ լքյալ գյուղերը: Ապրիլի 16-18-ին հանրապետության իշխանություններին իրենց հպատակությունն են հայտնում նաև Շորժա, Շիշկայ և Զիլ գյուղերը:<sup>34</sup>

Բերված տողերը և վերը շարադրվածը բավարար իմք են տալիս պնդելու, որ այս կապակցությամբ իրականությանը չի հաճապատասխանում Վ. Վիրաբյանի այն պնդումը, թե դեպի Աղրբեջան մահմեդական բնակչության տեղաշարժերը «... հետևանք էին որոշակի արտաքսման քաղաքականության, որն իրականացնում էր ՀՀ կառավարությունը, զգտելով համեմատարար միատարր բնակչություն ստեղծելով առաջին հերթին սահմանամերձ գոտիներում, դրանով իսկ ապահովագրել իրեն այն վտանգներից, որ գալիս էին Աղրբեջանից և Թուրքիայից»:<sup>35</sup> Մինչդեռ հեղինակը չի վկայակոչել իր անդումն ապացուցող ոչ մի փաստ այդ կապակցությամբ: «Պաշտոնապես նման բան չի եղել: Ասվածի լավագույն ապացուցներից է այն, որ սկզբնաղբյուրներում այդպիսի տեղեկություններ չկան: Նախքան հետագա իրադարձություններին անդրադառնալը, արժի ընթերցողին որոշ պարզաբանում տալ քննիչ հանձնաժողովի գործունեության մասին: Վերադառնանք սկզբնաղբյուրներին և թուրցիկ անցնենք դրանցից մի քանիսի վրայով: Զոդի շրջան գործուղված քննչական հանձնաժողովը կատարել է որոշակի աշխատանք և 1919թ. ապրիլի 27-ին ներկայացրել է իր պաշտոնական եզրակացությունը: Ըստ նախաքննության արդյունքում ծեռք բերված ոչ լրիվ տվյալների՝ հակառակորդի կողմից հանցավոր գործողությունները նախապես պլանավորված են եղել Աղրբեջանի դեկապարության կողմից: Բաքուն արդեն կանխավ որոշել էր իր ռազմավարական ուղեգիծը՝ Բասարգեզարի շրջանը կտրել Յայաստանից և կցել Աղրբեջանին և դրա լուծմանը ներգրավել էր շրջանի ողջ մահմեդական բնակչությանը»:<sup>36</sup>

Ինչ վերաբերում է ռոտմիստր Սիլիկյանի չափից ավելի մեծ պահանջներին՝ իրենց տրամադրելու ցորեն, գարի, ծիեր և այլն,<sup>37</sup> ընդամենը արիթ է հանդիսացել մահմեդականներին խռովության և գենքի դիմելու համար:<sup>38</sup>

Այսուհետերձ, Յայաստանի իշխանությունների բոլոր ջանքերը՝ մահմեդական բնակչությանը խաղաղություն պարտադրելու ուղղությամբ, հաջողություն չունեցան: Աղրբեջանը մտադիր չէր ծեռք քաշել Սևանի ավագանը գինակալելու մտադրությունից: Այդ նպատակի համար նա նախկինի պես հենվում էր հինգերորդ շարասյան դեր կատարող տեղի մուսուլման բնակչության վրա:

<sup>34</sup> Տե՛ս Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 245-248:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>36</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 263, թթ. 68-72, ֆ. 199, գ. 1, գ. 64, թթ. 11-15:

<sup>37</sup> 1918թ. վերջին նոր Բայազետի գավառ է գործուղվում ռոտմիստր Սիլիկյանը՝ Ղարաբայան հեծյալ դիվիզիոնը կազմավորելու նպատակով, սակայն դրա համար ոչ մի միջոց պետական զանձարանից բաց չի թողնվում: Սիլիկյանին իրավունք էր տրվել բռնագրավումի ենթարկել ծիերը, հանդերձանքը, գենքը և դիվիզիոնը պահելու համար անհրաժեշտ ամեն ինչ:

Տե՛ս՝ մանրամասն Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 249-250:

<sup>38</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 263, թթ. 68-72, ֆ. 199, գ. 1, գ. 64, թթ. 11-15:

1920թ. հայ-ադրբեջանական հարաբերությունների խրոնիկան լիքն է այդպիսի պատմություններով, որոնց անդրադարձել է ժամանակի մամուլը: Բասարգեչարի շրջանում մահմեդականների կազմակերպած զինված ելույթներին անդրադարձել է նաև Դաշնակցության օրգան «Դառաջ» թերթը 1920թ. մայիսի 4-ի համարում: Որպես օրինակ է բերվում Բասարգեչարի շրջանի Շիշկայայի գյուղական համայնքի ապստամբական ելույթը: «Շիշկայայի շրջանի թուրքական գյուղերում նկատվում են ապստամբական նշաններ: Զինված մարդիկ բարձրանում են լեռները, սկսվում է ուժեղ կրիվ, որի ժամանակ թշնամուց սպանվում ու վիրավորվում են 70 հոգի, իսկ հայերից 3 սպանված, 3 վիրավոր», -գրում է թերթը: Թերթը տեղեկացնում է նաև, որ՝ «Առիթից օգտվելով՝ Փոքր Սազրայի խռովարանները զինված՝ թիկունքից հարձակվում են, որոնց հետ տեղի հայ բնակչությունը 4 ժամ ինքնապաշտպանական կռվից հետո հաջողվում է դուրս քշել խռովարաններին գյուղից: Սպանվում է 15 հոգի, վիրավորվում՝ 8-ը».<sup>39</sup> Այս նույն առնչությամբ Բասարգեչարի արտակարգ կոմիսարը «Աշխատավոր» թերթին հաղորդում է, որ զինված քրդերն ու թաթարները շարունակ հարձակումներ են գործում հայկական բնակվայրերի վրա. քշել տարել են Թազաքենդ գյուղի տավարը՝ տասնյակ միլիոնների արժողությամբ: Աղամիսան գյուղից նույնպես քշել տարել են անասուններին:

Թաթար ավագակային խումբը Բաշքենդի և Քերիմքենդի դաշտերից տարել է 60 գլուխ խոշոր և 120 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

«Վերջին օրերս, - գրում է նա, - տեղացի բնակիչների հաճախակի սպանության դեպքեր են տեղի ունենում».<sup>40</sup>

Այդպիսի դրսևորումներ տեղի ունեցան շրջանի և գավառի նաև մի շարք գյուղերում: Անհարկի չծավալվելու համար, բավարարվենք նշելով, որ Դայաստանի իշխանությունների վճռական գործողությունների շնորհիվ հնարավոր դարձավ զսպել մահմեդական բնակչության անջատողական ծգուրմները և ճնշել նրանց զինված ելույթները:

#### ТУРЕЦКО-ТАТАРСКИЕ МЯТЕЖИ В ПРОВИНЦИИ НОР - БАЯЗЕТ В 1918 – 1920 ГГ.

*Г. М. Арутюнян*

Статья посвящена турецко – татарским раздорам в провинции Нор-Баязет в 1918 году.

Турецко-татарские несдержанные претензии взорвать Армению изнутри и по частям превратить в сатилема Азербайджана дошли своей кульминации после того, как Азербайджан стал независимым государством. Для этой цели Азербайджан опирался и на местное население, исполняющее роль пятой колонны, и побуждал его поднять оружие против законной власти. Одним из основных очагов антигосударственных движений стала провинция Нор-Баязет и в первую очередь не без основания, Басаргечарский район, который граничил с Азербайджаном и снабжался им с другой стороны, в составе населения большим был удельный вес мусульман. Благодаря решительным действиям армянских властей стало возможным сдерживание сепаратистских стремлений мусульман и подавления их вооруженных выступлений.

<sup>39</sup> «Դառաջ», 4 մայիսի 1920, թիվ 90:

<sup>40</sup>Տե՛ս «Աշխատավոր», 17 հուլիսի 1920, թիվ 82, 18 հուլիսի 1920, թիվ 83:

## TURK – TATAR REBELS IN NOR BAYAZET IN 1918- 1920

*H. M. Harutyunyan*

After independence Azerbaijan became more persistent in pursuing the aim of binding Armenia to its territory. In order to carry out this plan, they made the population to struggle against legal authorities. The region where riots mostly took part was Basargechar in Nor Bayazet. The reason was that it bordered Azerbaijan and was constantly under pressure by Moslem, overwhelming majority being Moslem.

Due to resolute actions and measures taken by Armenian authorities it became possible to restrain armed riots.

## ԶԵՄԱՏՎՈՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾԵՆԹԱՅՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՐԱՆԳՈՒՄ 1917-1920 ԹԹ.

**Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ

Յետփետրվարյան Ռուսաստանում ազգային և վարչատարածքային բաժանումների հարցի լուծումն անմիջականորեն կապվում էր տեղական ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոնների ստեղծման գործընթացի հետ:<sup>1</sup> Սա վերաբերում է և Անդրկովկասին: Փաստաթթերից մեկում կարդում ենք. «... պատահական կամ դիտավորյալ սահմանաբաժանման անհարմարությունները շուտով աչքի ընկան, մանավանդ, երբ ծագեց հարց Անդրկովկասում զեմստվոյական հիմնարկություններ մտցնելու մասին»:<sup>2</sup> Տեղին է նշել, որ Անդրկովկասում զեմստվոններ մտցնելու խնդիրը լայն կերպով հրապարակ եկավ դեռ 1905թ. հեղափոխությունից հետո, երբ ժողովուրդը հնարավորություն ստացավ կյանքի կոչել այնպիսի հիմնարկություններ, որոնք հասարակության լայն խավերին դնում էին ինքնագործունեության կազմակերպման ճանապարհի վրա: Երկրամասում զեմստվոններ հիմնելու հարցը բարձացվել է նաև 1909թ. զեմստվոյական խորհրդակցությունում: Սակայն երկար ու ծիգ տարիներ Անդրկովկասի ժողովուրդների հետևողական ձգտումը՝ երկրամասում ունենալ զեմստվո, մշտապես հանդիպում էր հին վարչակարգի կոշտ դիմադրությանը: Բանն այն է, որ ցարա-

<sup>1</sup> **Վ. Մելիքյան**, 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 117:

<sup>2</sup> «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.)» փաստաթթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 196: